№ 216 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3 1903 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3 № 216

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ» Tiflis, Rédaction «Mschak»

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդական բեմի հաշիւը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ղրիմի աֆերից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռաւոր Արեւելքում. Ի՞նչ է կատարվում Մակեդոնիայում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Եւրոպական գրականութիւնից.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԵՄԻ ՀԱՇԻՒԸ

«Մշակի» ներկայ համարում մենք զետեղում ենք Հաւլաբարի Մուրաշկէի Թատրոնի ժողովրդական բեմի հայկական բաժնի ամփոփ հաշիւը: Դա մի համեստ, բայց օգտաւէտ գործունէութեան հաշիւ է, որ արժանի է առանձին ուշադրութեան:

Սիրողների մի խումբ, առանց աղմուկների, առանց փառասիրական ցոյցերի, առանց փքուն ռեկլամների, աշխատում էր ներկայացումներ կազմակերպել և օգտաւէտ զուարճութիւններ տալ հասարակ ժողովրդին: Մենք առիթ ենք ունեցել տեսնելու և համոզվելու, որ ժողովուրդը գոհ սրտով հեռանում է թատրոնից և ուրախ է, որ նրա ազատ ժամերը անցել են այնպիսի մի զուարճութեամբ, որ նրանից չեն խլել մեծ գումար և պատճառել են հոգեկան բաւականութիւն: Ժողովրդական բեմը խլել է գինետան և Թղթախաղի ձեռքից զոհերի մի որոշ թիւ և այդպիսով վերադարձրել ընտանիքին այն մարդկանց, որոնք լաւ զուարճութիւն չունենալու պատճառով, ենթարկվում են շրջապատող հրապոյրների քայքայիչ ազդեցութեան:

Հաւլաբարի ժողովրդական բեմի հաշիւը վերաբերում է միայն ինն ամսվայ գործունէութեան, այն է 1902 թւի նոյեմբերի 23-ից մինչեւ ներկայ տարվայ սեպտեմբերի 1-ը: Այդ ժամանակամիջոցում տրված է 34 ներկայացում, որոնց վրա եղել է ծախս 1544 րուբլի 17 կոպէկ, կամ միջին թւով ամեն մի ներկայացման վրա 45 րուբլի 41 կոպէկ: Թանգ նստել են այն ներկայացումները, որոնք պահանջել են նոր և աւելի բարդ դեկորացիաներ կամ որոնց համար կարեւոր է դառնել հրաւիրել հմուտ դերասանների՝ որոշ վարձատրութեամբ: Անկասկած՝ ծախքերը աւելի կը լինէին, եթէ սիրողները իրանք աշխատած չը լինէին զգեստների մի մասը հայթհայթել մասնաւոր կերպով, սեփական միջոցներով և ձրիապէս կատարել պաշտօններ ու յանձնարարութիւններ:

Առաջ բերած հաշւից երեւում է, որ մուտքը պակաս է ծախքից 22 րուբլի 23 կոպէկով. իսկ եթէ ուշադրութեան առնենք այն հանգամանքը, որ առաջին ներկայացումը ձրի է եղել, մինչդեռ նա նստել է 29 ր. 44 կոպէկ, այն ժամանակ կը տեսնենք, որ ընդհանրապէս ծախքերը ծածկվել են ներկայացումների մուտքով: Դա մի և նոյն ժամանակ ցոյց է տալիս, որ ապագայում ներկայացումները կարող կը լինեն իրանք իրանց ապահովել սեփական եկամուտի գումարներով:

Սակայն մի հանգամանք փոքր ինչ փոխում է իրերի դրութիւնը: Սիրողների խումբը դիտաւորութիւն ունի աւելի եւս էժանացնել տեղերի գները և դարձնել թատրոնը դիւրամատչելի այն խաւերի համար, որոնք դժուարանում էին նախկին փոքր վճարն էլ տալ և սահմանել գները 30 կոպէկից սկսած մինչեւ 5 կոպէկ: Աչա այդ դէպքում մուտքի գումարը անբաւարար կը լինի ծախքը ծածկելու համար և կարիք կը զգացվի յատուկ նպաստի: Սիրողների խումբը մինչեւ այժմ չէ դիմել հակաալկոհոլական ընկերութեան դրամարկղի օգնութեանը և տարել է ամեն բան սեփական միջոցներով: Արդեօք չե՞ն գտնվի մասնաւոր անձինք, որոնք հակաալկոհոլական ընկերութեան միջոցով օգնէին Հաւլաբարի գործողների խմբին և կարողութիւն տային նրանց սկսած գործը աւելի եւս զարգացնել, ամրացնել և տարածել ժողովրդական մասսայի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂՐԻՄԻ ԱՖԵՐԻՑ

(Թռուցիկ տպաւորութիւններ)

V

Թողնելով Խանսարայն ու Բաղչէսարայը, մենք անցանք դէպի Չուխուդկալէ կոչված հռչակաւոր ժայռաքաղաքը, որը գտնվում է Բաղչէսարայից մի երկու վերստ հեռաւորութեան վրա: Չուխուդկալէ—Թաթարերէն նշանակում է՝ հրէական բերդ: Երբ անցեալում այս բերդաքաղաքի ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում էին հրեայ-կարայիմները—քաղաքն էլ ստացաւ իր անունը տիրապետող տարրից, որից առաջ նա կոչվում էր Դըրխ-օր: Քաղաքի գոյութիւնը այնքան հին է, որ նրա հիմնարկութեան մասին պատմութիւնը ոչ մի փաստ չէ գտնում որոշ եզրակացութեան գալու համար: Ասում են, թէ անցեալում այդ նշանաւոր բերդի մէջ բանտարկվելիս են եղել յանցաւոր խաները և հակապետական իշխանները, որոնց մէջն էլ եղել է իշխան Վ. Բ. Շերեմետեւը, որը մօտ բանտերում գերեւել է ամբողջ քսան տարի—1660—1680 թ.

Մինչեւ XIX դարը այստեղ ապրելիս է եղել բազմաթիւ ժողովուրդ, որը և թողել է զանազան արձաններ, շիրիմներ և զանազան այլ յիշատակարաններ: Թաթարական մի կիսաքանդ աղօթատան արձանաքարի վրա գրված է, թէ այստեղ Թոխթամիշ խանը իր աղջկան ինչն է թաղել. աղջկայ անունն է Նէնէջան խանում. ըստ աւանդութեան՝ այդ պատահել է մօտ 500 տարի առաջ: Գեղեցկուհի Նէնէջանը, հակառակ իր խաղաղասէր հօր ցանկութեան, սիրահարվել է մի բաղչէսարայցի երիտասարդի վրա, և հօր բացակայութիւնից օգտվելով, իրանց ծառայիս պարտէզում տեսակցութիւն է նշանակել իր սիրելիի հետ: Ցանկարծակի լուր է գալիս, թէ դաժան խանը վերադառնում է Բաղչէսարայ. պատժի երկիւղը այնքան է սարսափեցնում խեղճ աղջկան, որ նա դիմում է ինքնասպանութեան և բարձր ժայռից ինքն իրան գլորում է խորունկ անդունդը: Աղջկայ շիրիմի վրա հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Այստեղ հանգչում է հռչակաւոր Նէնէջան խանում Թաղտէխին, Թոխթամիշ խանի դուստրը, որ վախճանվեց թամուզի ամսում, 841 (1437)»: Այս ամեհած քաղաքի հնութիւնները քրքրելիս, հնախոյզները գտել են կարայիմների երկու տաճարները, որոնք կառուցվել են 600 տարի առաջ: Տաճարները մի-մի պարզ շինութիւններ են, որոնցից իւրաքանչիւրի ներսը բաղկացած է մի ընդարձակ սենեակից, որ բաժանված է երեք մասերի, ինչպէս առհասարակ լինում է այդ՝ համաձայն իրանց կրոնի. ա) հեխալ, նշանակում է սուրբ սեղան, որտեղ կեցած է լինում նրա հինգ պատգամների գիրքը. բ) զուլխան—որտեղ տեղաւորվում են աղօթարարները, սակայն ոտնամանները անպայման հանած և գ) այն դահն է, որտեղ նստարաններ են դրած բացառապէս այն ծերունիների համար, որոնք այլ եւս անկարող են կանգնել ոտի վրա:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Մտքեր ու դէմքեր

Բեռնար Լազար

Ֆրանսիայի ժամանակակից գրականութեան ամենագեղեցիկ, ամենաուժեղ դէմքերից մէկը, Բեռնար Լազար մեռել է, վերջերումս, Փարիզի մէջ: Տակաւին երիտասարդ էր, 38 տարեկան, այնպիսի մի հասակում, ուր մտածումները, գաղափարները, կեանքի փորձառութեան բովից անցնելով՝ զտվում, հասունանում ու աւելի հաստատ հող են գտնում իրանց համար: Ուրեմն սա յաւէտ լռութեան դատապարտվում է մի ուղեղ, որն իր ամբողջ կենդանութեան մէջ էր:

Փիէր Կիյեար, Բ. Լազարի գրական ընկերն ու մտերիմ բարեկամը՝ հանգուցեալի յիշատակին նուիրված հիացումի ու յարգանքի մի քանի տողերում յայտնում է, թէ Բ. Լազար մեռաւ երկար ու անխնայ հիւանդութիւնից յետոյ, մեռաւ «մի հին իմաստունի խաղաղ գիտակցութեամբ»:

Պարթեւահասակ, առողջ, հարուստ կազմուածքով մի տղամարդ էր Բէռնար Լազար, պատւական որքան ներքինով, նոյնքան արտաքինով: Ծագումով հրեայ, Լազար իր ցեղի ֆիզիկական, թէ բարոյական յատկանիշներից ոչ մէկը չունէր: Հրէական տիպ չունէր, չունէր նաև հալածված ժողովուրդների յատուկ խորամանկութիւնը, նենգամտութիւնը, միջավայրերին ու պարագաներին յարմարվելու բացառական եռանդը: Բարձր ու շիտակ էր իր նկարագիրը: Անկեղծ էր ու զիջումներ անելու երբեք սովոր չէր: Բ. Լազար յաջողել էր թոթափելու իր ցեղական բոլոր արատները, նախապաշարումները: Համաշխարհային մարդ էր, բառիս ամբողջ գեղեցիկ իմաստով՝ այսինքն ճշմարիտ մարդ: զգայուն ամեն ազգի, ամեն ցեղի տառապանքների, և միշտ պատրաստ՝ կռւելու արդարութեան և ճշմարտութեան համար: Ողջունել էր հասարակական ամենաառաջադէմ գաղափարներն ու վարդապետութիւնները. առանց որ և է կուսակցութեան բանակում զինուորագրվելու, կռւում էր, պաշտպան լաւագոյն մի կազմակերպութեան անխոնջ ու համոզուած գործաւորների հետ կողք կողքի:

Ընդհանրապէս կայ մի նախապաշարմունք, որ յատուկ է զարգացման այս և այլ աստիճանների վրա կանգնած բոլոր ժողովուրդներին և ազգերին: Համաշխարհային մարդ, կօսմոպոլիտ, ուրեմն մի և նոյն է թէ դաւաճանած՝ իր սեփական ցեղին, անտարբեր՝ իր արիւնակից եղբայրների չարչարանքին: Այս անիրաւ, սխալ ու սնամէջ նախապաշարմունքն էր, որ Լազարի երեսին նետեցին հրեաները: Բայց Լազար արհամարհանքով ցնցեց իր ուսերը և երբ եկաւ կռւի ահաւոր, անխնայ, հերոսական կռւի վայրկեանը, երբ նրան դաւաճանութեան, անտարբերութեան յանցանքի մէջ մեղադրողները ծակերի մէջ էին մտել, Լազար անվեհեր, անձնազոհ արիութեամբ նետվեց առաջ ու մի անգամ էլ ապացուցեց, թէ ազգասիրութիւնը առնիքների վրայից հրապարակներում բղաւելու մէջ չէ կայանում: Լազար փաստօրէն ապացուցեց, որ կօսմոպոլիտ մակդիրը մի պարծանք է իր համար, ինչպէս և նրանց համար, որոնք արժանաւորապէս կրում են այդ անունը իրանց վրա: Բ. Լազար գործով ապացուցեց, որ այն մարդը, որը անտարբեր չէ կարողանում մնալ ուրիշների ցաւի, չարչարանքի առաջ, անկարելի, անբնական է, որ անտարբեր մնայ իր հարազատ եղբայրների տառապանքի հանդէպ, քանի որ ցեղական ձայնը իր աղիքների խորքերից որոտում է ու արիւնակցութեան անժխտելի, գրեթէ տարրական ոյժը մղում է նրան դէպի իր ցեղակիցները:

Այդ կռւի վայրկեանը Դրէյֆուսական հարցի առաջնագոյն վայրկեանն էր: Դրէյֆուս դատապարտված էր մահւանից նրա համար, որ հրեայ էր, այսինքն՝ դաւաճան, ամենադաժան Յուդայի արիւնակից: Դրէյֆուսի դատապարտումով՝ հրեայ հարիւրաւորից աւելի հրեայ ժողովուրդն էր, որ պատժվում, նշաւակվում էր. այն ժողովուրդը, որին քրիստոնեայ ու քաղաքակիրթ ազգերը դարերով չարչարելուց չը յոգնած, ամեն օր աւելի ու աւելի կատաղութեամբ հալածում էին:

Բ. Լազար ունէր գրողի անհրաժեշտ համբաւ. ֆրանսիական ամենամեծ օրաթերթերը՝ իրանց էջերը բացել էին նրա տաղանդի առաջ: Դրէյֆուսի դատը ձեռք առնելով՝ Լազար պիտի կորցնէր ոչ միայն իր շահած դիրքը, այլ և պիտի ենթարկվէր անխնայ հալածանքի: Այն բոլոր թերթերը, որ բաց էին իր առջև, պիտի փակվէին. և ինչ որ աւելի վիրաւորական էր, իր գրական մտերիմ ընկերներն անգամ երես պիտի դարձնէին իրանից, որովհետեւ Դրէյֆուսի դատը ոչ մի ժողովրդականութիւն չէր վայելում:

Մի գաղափար տալու համար այդ մասին, յիշենք հետեւեալ փաստը:

«Aurore» լրագիրը յայտնի էր իբրև ամենաթունդ ազատական օրաթերթ, հիմնված էր Դրէյֆուսի դատապարտութիւնից քիչ յետոյ, նախկին մի կոմմունիստ՝ Էռնէստ Վօգանի ձեռքով, որը իր շուրջը հաւաքել էր Կլէմանսոյի, Լօրան Տայիադի, Լիւսիէն Դէկավի, Ժան Ժիւլիէնի նման ամենաառաջադէմ ոյժեր: «Aurore», բնականաբար, սկզբում թշնամի էր հակահրէական, նացիօնալիստական մութ հոսանքներին: Վօգան Բ. Լազարի աշխատակցութեան դիմեց, բայց պայման դրեց Լազարի հետ, որ այս վերջին դրէյֆուսական հարցը չը շօշափէ «Aurore»-ում:

Ահա թէ որքան վտանգաւոր դատ էր Դրէյֆուսի դատը:

Բ. Լազար այնուամենայնիւ հնազանդվեց իր խղճմտանքի ձայնին: Իմացել էր, որ Դրէյֆուս դատապարտված է ապօրինութեամբ, դատաստանական գաղտնի նիստում, առանց մեղադրվողի գիտութեան երեան բերված ապացուցաթղթերի հիման վրա: Ու Լազար իր գիրքը, իւր գրչից աւելի թանկագին մի բան, իր անձնական ապահովութիւնը վտանգելով նետվեց կռւի դաշտը: Դիմումներ արեց բոլոր ազատամիտ, արմատական ձգտումների տէր գրագէտներին, հրապարակախօսներին, ինչպէս Հանրի Ռօշֆօրին, Կլէմանսոյին և նոյն իսկ Զօլային: Բայց ոչ մէկը իր աջակցութիւնը չը խոստացաւ, այլ ընդհակառակը ամենքը չափազանց դժգոհ ընդունելութիւն արին: Այդ բոլոր հասարակական գործիչները, որոնք յետոյ մասնակցեցին Դրէյֆուսի դատին, ինչպէս Կլէմանսօ, Զօլա և այլն, մտածում էին թէ Լազարը իր ցեղական զգացումների զոհն էր, թէ Դրէյֆուս դատապարտվել էր օրինաւոր և արդար կերպով, բայց նա ուզում էր արդարացնել իր յանցաւոր ցեղակցին:

Երբ ոչ մէկ թերթ չը հիւրընկալեց իր մարտական յօդուածները, Լազար կռւեց գրքոյկներով: Վերջապէս նոր գաղտնիքներ բացվեցին, Լազարի անխնայ, գերմարդկային ջանքերի շնորհիւ լոյսի մի պատառ ընկաւ այդ մութ ու ցաւագին հանգոյցի վրա, նախապաշարմունքներից ազատ, բարեացակամ մարդիկ միջամտեցին, օրինակ Զօլան, ու գիտենք այնուհետեւ, թէ ինչ եղաւ այդ զարհուրելի մեքենայութիւններով շաղկապված, կնճռոտ դրաման:

Ու այդ հրաշքը կատարվեց միմիայն մի մարդու, Բեռնար Լազարի շնորհիւ: Ահա թէ ինչ բարոյական ոյժի տէր էր այդ կօսմոպոլիտ հրեան:

Բայց Դրէյֆուսի խնդիրը հակահրէականութեան մէկ միջադէպն էր: Հրեաները չարչարվում էին ամեն տեղ, ամեն երկրում: Բ. Լազար նուիրվեց այդ պարիա ժողովրդի պաշտպանութեան: Դրէյֆուսը հարուստ էր, ունէր լայն միջոցներ, ունէր ստարացեղ ու ցեղակից պաշտպաններ, բայց պարզ, աղքատ, գործաւոր հրեաները ոչ մէկ պաշտպան, ոչ մէկ բարեկամ չունէին: Հրեայ հարուստները, միլիօ-

Կարայիմները հրէական մի առանձին աղանդ են կազմում, որոնք միանգամայն մերժում են Թալմուդականութեան օրէնքները և ընդունում են միայն աստուածաշունչը, ճանաչելով միակ հայր Աստուծուն։ Դրանք խօսում են Թաթարերէն, հագնւում են եւրոպական ձեւով, չատ ճշմարտախօս և խաղաղ ժողովուրդ են, և հրէական ազգային առանձնայատկութիւններից իսպառ զերծ են մնացել, որովհետև հրէական ծագում չունեն։ Դրանք, ասած, կարծեմ, Կատարինէ II-ի ժամանակից, վայելում են հաւասար իրաւունքներ պետութեան միւս հպատակների պէս, բացի բուն հրէաներից։ Ռուսաստանում կարայիմների թիւը հասնում է մօտաւորապէս 8000-ի, որոնց ամենամեծ մասը ապրում է Ղրիմում. այդ աղանդից չատ չնչին թւով կան և Աւստրիայում. Անցեալում դրանց ազգութեան կենտրոնն էր կազմում հռչակ վայրը Չուֆութ-քալէն, որից սակայն այժմ միայն մահվան հոտ է փչում...

Նայում ես չուրջդ—դատարկ փողոցներ, հոյակապ չէնութիւնների ողբալի բեկորներ, լուռ արձանաքարեր, անկատար տներ, որոնք բոլորը վկայում են անցեալում այդտեղի օդը չնչող մարդկանց եռացող կեանքի գոյութիւնը, և այդ բոլորը կարծես միաբերան մրմնջալիս լինեն «ամ, ամ փառաց անցաւորի» խորհրդաւոր երգը...

Տէր Աստուած, որպիսի ճնշող, սրտակտոր տեսարան, որպիսի ծանր տպաւորութիւն է թողնում մարդու վրա այս դատարկված, մեռած քաղաքը։ Ահա քարուքանդ եղած հարիւրաւոր տների քարակոյտները, որոնք կարծես մի մի լուռ գերեզմաններ լինեն։ Կեանքի փոքրիկ նշոյլն անգամ այստեղ բացակայում է։ Սակայն չէ՞ որ այստեղ եւ դարերի ընթացքում ապրել և չնչել են մեզ պէս հողարաւոր մարդիկ, որոնք և վայելել են ժամանակաւոր կեանքի զուարճութիւններն ու քաղցրութիւնները։ Այո, դարերի արիւնոտ հոսանքը միանգամից քշել տարել է նրանց իր զօրեղ ընթացքի հետ, անողոք մահվան սև դրօշմը էապէս անհետացրել է խարուսիկ կեանքի սիրահար մարդկանց ողորմելի գոյութիւնը, և նրանց վաղանցուկ կեանքի անհետ փոթորիկից յետոյ մնացել են միայն դատարկ յիշատակարանները, որոնց վրայով այժմ իշխանաբար սուլելով անցնում ու սահում է միայն Թափանցիկ քամին. դա արդէն բնութեան կծու, սարկազմով լի ծաղրն է՝ աշխարհային արհաւիրքների դէմ յարուցած՝ մարդկային անզօր մաքառման վրա...

Ճնշող, տխրող մտապատկերները ինձ տարան, ուղեցին մեր տարաբաղդ Անիի ողբագին անցեալի մէջ... Ստամոլոր քայլերով եւ հեռացայ այդ լալկան, բազմատանջ վայրերից...

Սուրխաթեան

Եալթա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 29-ին

Որովհետև մեր ամբողջ սեզոնի ընթացքում «Մշակը» հետաքրքրվել է մեր գործունէութեամբ, ուստի աւելորդ չենք համարում այդ գործունէութեան հաշիւը ներկայացնել նրա ընթերցողներին։

Ամբողջ սեզոնի ընթացքում բոլոր ներկայացումների թէ բարոյական և թէ նիւթական պատասխանատւութիւնը ընկած է եղել բոլոր սիրողների վրա հաւասարապէս, որ և աշխատել ենք ըստ կարելոյն։

Հաչուէից երեւում է, որ մենք, Հաւլաբարի հակա-ալկոհոլային ընկերութեան Ն. Ն. Մուրաչկոի Թատրոնի սիրողներս, ունեցել ենք վնաս 22 ր. 23 կ., որը ծածկել ենք մեր սեփական միջոցներից։

Բացի մշտական մասնակցող սիրողներից, բարեհաճել են մասնակցել. տ.տ. Ջաբէլ, Վարդուհին, Նոնիկեան, օր. օր. Վարսենիկ և Աստղիկ, պ.պ. Ամո-Խարազեան, Մանդինեան և Միրզոյեան, որոնց սիրողներս յայտնում ենք մեր չնորհակալութիւնը։

Ցայտնում ենք չնորհակալութիւն նոյնպէս այն հեղինակներին և դերասաններին, որոնք չեն զլացել տալ իրանց հեղինակութիւնները կամ ունեցած պիէսները։

«Մշակի» և «Տէլէֆօն» խմբագրութիւններին նոյնպէս յայտնում ենք մեր խորին չնորհակալութիւնը, որ չարունակաբար ձրի տպել են մեր յայտարարութիւնները։

Ի դիմաց Հաւլաբարի հայ Թատերասէրների՝

Գ. Սարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոյս տեսաւ «Առողջապահիկ Թերթի» առաջին համարը։ Դա մի տետր է բաղկացած միջադիր 24 երեսից։ Թերթի խմբագիր բժ. Վահան Արծրունի իր առաջին յօդուածում խօսում է առողջապահութեան ընդհանուր պահանջների և առողջապահական հիմնարկութիւնների մասին։ Բժ. Ա. Բաբայեան զետեղել է մի յօդուած առողջապահական հայ գրականութեան և նոր Թերթի կատարելիք դերի մասին։ Բժ. Ա. Բուղուղեան խօսում է առողջապահական գիտելիքների տարածման նշանակութեան մասին։ Բժ. Նուսարդեան ողջունելով նոր Թերթը, խօսում է նրա անհրաժեշտութեան մասին։ Բժ. Տաղաւարեան ուղարկել է Կ. Պոլսից մի յօդուած օդի և լոյսի մասին։ Բժ. Կ. Փաշայեան Թաւրիզից գրել է մի յօդուած ցրտառութեան և մարմնի ամրացման մասին։ Գարանֆիլեան Վիէննայից ուղարկել է յօդուած ատամների առողջութեան մասին։ Վերջապէս Վ. Արծրունի գրել է մի յօդուած մարմնի տաքութիւնը չափելու մասին։ Թերթը լոյս է տեսնելու ամիսը երկու անգամ և պէտք է արժենայ նոյեմբերի 1-ից մինչև յունվար 75 կ. Տարեկան գինն է 2 ր. 50 կ.։ Առաջին համարի հետ ուղարկվում է բաժանորդներին ձրի լաւելուած՝ «Վաւ ցաւ» կամ «Սիֆիլիս» անունով։

—

Ուչադրութեան առնելով այն հանգամանքը, որ մեղրամոմի արտահանութիւնը Ռուսաստանից չնչին է, այն ինչ արտասահմանից բերվում է Ռուսաստան տարեկան ոչ պակաս, քան 3½ միլիօն րուբլու մեղրամոմ, մի քանի խոչոր առևտրական մեղուաբուծներ մտածել են աւելացնել մեղրամոմի արդիւնաբերութիւնը Ռուսաստանում՝ սովորեցնելով մեղուներին չաքարից մեղրամոմ պատրաստել։ Փորձը ցոյց է տուել, որ մի փունտ մեղրամոմ պատրաստելու համար մեղուները գործ են դնում 11—13 փունտ չաքար։ Հասկանալի է, որ չաքարի այժմեան գնով ամենևին ձեռնտու չէ մեղուապահներին պարապել այդ գործով, ուստի նրանք դիմեցին ֆինանսների մինիստրութեան՝ խնդրելով չաքար բաց թողնել իրանց առանց ակցիզի։ Ֆինանսների մինիստրութիւնը թոյլ տուեց մեղուապահներին գնել չաքար առանց լրացուցիչ ակցիզի մեղուներին կերակրելու համար՝ սակայն չաքարի այն պաչարից, որ նշանակված չէ ներքին վաճառմանց հանելու համար և վերցնելով մեղուապահներից 1 րուբլի 75 կոպէկ սովորական ակցիզ իւրաքանչիւր պուդից յօգուտ արքունի գանձարանի։ Շնորհիւ այս հանգամանքի մեղուապահները հնարաւորութիւն ստացան առանց վնասի իրանց համար իրագործել վերոյիչեալ մտադրութիւնը։

—

Այս տարվայ ընթացքում նկատվում է Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերը մտնել ցանկացողների մի առանձին հոսանք։ Տուած խնդիրների թիւը զարմացնող է, քան մինչև այժմ եղել է կուրսերի 25-ամեայ գոյութեան ընթացքում։ Ներկայումս տուած է 910 խնդիր, որոնցից ընդունված են 594-ը։ Ընդունված ուսանողուհիներից 383-ը մտել են պատմական-լեզուագիտական բաժանմունքը, իսկ 211-ը ֆիզիկո-մաթեմատիքական բաժանմունքը։ Մօտ 400 հոգի խնդիր տուողներից ստացել են իրանց ուսման ընթացքը պարգևներով։ Այս տարի կուրսերում ուսման ընթացքը կատարեն 200 ուսանողուհիներ, որոնց այժմ թոյլ է տուած ուսուցչական պաշտօն յանձն առնել ոչ միայն կանանց միջնակարգ ուսումնարանների տարրին, այլ և բարձր դասարաններում։ Այս տարի բոլոր ուսանողուհիների թիւը կուրսերում հասել է 1500-ի։

—

Մոսկովեան լրագիրներում տպագրված է ներքին գործերի մինիստրի հետևեալ կարգադրութիւնը. «Ի նկատ առնելով «С. П. Вѣд.» լրագրի կողմից երևեցրած վնասակար ուղղութիւնը, որ առանձնապէս արտայայտվեց նրա 263-րորդ համարի առաջնորդող յօդուածում, ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել «С. П. Вѣд.» լրագրին, ի դէմս նրա հրատարակիչ իշխան Էսպէր Ուխտոմսկու և խմբագիր ազնուական Ալէքսանդր Սուսլինին, առաջին նախազգուշացումը։»

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Դերբենտի գեղավաճառ Վ. Գորչկով Ղուբայում նորերս բացեց իր բաժանմունքը գեղագործական խանութի, որի մէջ ծախվում են գեղագործական իրեր համեմատաբար աւելի էժան, քան այստեղի գեղատան մէջ և այլ մագազիններում։ Այստեղի վաճառականները սովորել էին ամեն բանի վրա թանգ գներ նշանակել։ Ուրախ ենք, որ վերջապէս Ղուբան էլ առաջադիմութեան չաւղի վրա է կանգնում և ունի վերջապէս գեղագործական մագազին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Եապօնիան սպառնում է. Եապօնիայից ստացված նորագոյն տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այնտեղ օրէցօր աստիճանում է դըժգոհութիւնը Ռուսաստանի դէմ և աւելի ու աւելի ակներև է դառնում պատերազմելու պահանջը։

—Ով որ մօտիկից ծանօթ է Եապօնիայի ներքին և քաղաքական կեանքին, գրում է «Новый Край» Թերթի Թղթակիցը Իոկոհամից, նա անչուշտ նկատած կը լինի, որ Եապօնիան եռանդուն կերպով պատրաստվում է Ռուսաստանի դէմ պատերազմելու... Օրէցօր աւելանում է պատերազմ պահանջող կուսակցութեան կողմնակիցների թիւը։ Այդ կուսակցութեան պարագլուխներն են զինուորական մինիստր դուքս Տերաուչին և արտա-

---

նատէրները, որոնց Լազար մի հուժկու բացատրութեամբ «Իսրայէլի ցեխ» (La boue d'Israël) էր անուանում, չէին հետաքրքրվում իրանց չքաւոր, անասնական հարստահարութեան ու հալածանքի մատնված եղբայրներով։ Կապիտալիստ միլիօնատէր հրէայի, ինչպէս և բոլոր ազգի հարուստների համար դասակարգային չահերը բարձր են ազգային, ցեղական ամեն չահերից։ Իրանք ամենավատ տեսակի կօսմօպօլիտներ, առիթը ձեռքից չեն փախցնում սակայն՝ նախատելու համոզումով ընդհանուր եղբայրութիւն, համերաշխութիւն քարոզողներին։

Լազար իր անժառանգ, անտէր եղբայրների պաշտպանութեան համար պաշտպաններ կռուարեց Արևելքի հրէաների մօտ։ Այցելեց մանաւանդ Ռումինիան և խորապէս ուսումնասիրեց տեղական հրէաների վիճակը. ծանօթացաւ հրէաների վրա վարչական կարգադրութեամբ գործ դրված սովի, մահվան, հալածանքի, աղանութեան և կոտորածի վիճակագրութիւնների հետ։ Ու իր ուսումնասիրութիւնների առաջին արդիւնքը, ռումինական կառավարութիւնը ամբաստանող մի ահաւոր յիշատակարան լոյս տեսաւ «Կահիէ դը լա Քէնզէն» կիսամսեայ հանդէսում։ Այս հարցին նուիրված ուրիչ աշխատութիւններ պատրաստում էր, բայց նրանք նրա վաղահաս մահվամբ անկատար մնացին։

Մինչև վերջը Լազար իր ազգակիցներին հաւատարիմ մնաց։ Իր արիւնակիցների տառապանքի առաջ վրդովվում էր, բայց վրդովվում էր նոյնպէս բոլոր ճնչված ցեղերի տանջանքի առաջ։ Ու իր անխարդախ, չիտակ բնաւորութեամբ երբեք չը կարողացաւ հաշտվել այն մտքի հետ, թէ կարելի է որոշ չահեր նկատի ունենալով չողոքորթել, գովեստներ չռայլել այն մարդուն, որը իր խղճի վրա ունի ահաւոր ոճիրներ։

Այսպէս, երբ անցեալ տարի գումարվող սիոնիստական համաժողովը՝ Սուլթան Համիդին ուղարկեց չնորհակալութեան ու չնորհաւորութեան հանրածանօթ հեռագիրը, Լազար բողոքեց ղայրոյթով այն բոլոր հրէայ պօլիտիկոսների դէմ, որ Գլադստոնի նման մի մարդու կողմից «Մեծ Մարդասպան» հռչակված հրէչին քծնիչներ ու յարգանքի արտայայտութիւններ չռայլելու չափ ստորանում էին։

Բ. Լազար ոչ միայն հասարակական գործիչ մի գեղեցիկ տիպար է, այլ և գրական մի խոչոր դէմք։

Բայց այստեղ խօսքը տանք պ. Գիյարին, որը Լազարի գրական ամենամօտիկ ընկերն է եղել, հետևաբար լաւ ծանօթ է նրա մտածումի բնաշրջութեան։

«Բ. Լազար իր լաւագոյն գրքերից մէկը անուանել էր Ջահակիրներ (Les Porteurs de Rorches)։ Ինքն էլ, 1886 Թուականից սկսած՝ այսինքն Փարիզ հաստատվելուց ի վեր իրան ուղեկցող երիտասարդի համար մի ջահակիր եղաւ։ Լազար իր ազդեցութեամբ երիտասարդներին հարկադրեց գրականութեան, արուեստի, և ժամանակակից իրերի և մարդկանց մասին իրանց ունեցած գաղափարներն ու կարծիքները ամեն վայրկեան քննութեան ենթարկել, վերլուծել...

«Իր նախորդներից երեք հոգի իր մտածումի զարգացման վրա մեծ ազդեցութիւն գործեցին։ Լը կոնտ դը Լիլ, Վիլիէ դը Լիլ Ադան, որոնցից բոլորովին տարբեր մէկը, Դիւշէն տբբան, որ այժմ Հռոմի դպրոցի տեսուչն է։ Երեքը միասին իրան օգնեցին, որպէս զի կարգաւորէ իր հակասական ընդունակութիւնները—մի կողմից բնազանցութեան համար ունեցած իր չատ ուժեղ սէրը և միւս կողմից իր խանդավառ, բուռն ու ճոխ երևակայութիւնը. մի և նոյն ժամանակ հաչտեցնէ ընդհանուր գաղափարներ, լայն տեսութիւններ մշակելու հակումը՝ յստակ, որոշ փաստերի ուսումնասիրութեան հետ։ Նրանցից սովորեց նոյնպէս իր նախադասութիւնները, որքան կարելի է, գեղեցկացնելու ճոխացնելու արուեստը։

«Իր հպարտ հեզնութիւնը, մի քանի բանաստեղծական էջերի դաժան պերճախօսութիւնը ինչպէս նաև իր գրքեր քնարերգական պատմուածքների լեզուական հարստութիւնը Լըկոնտ դը Լիլի և Վիլիէ դը Լիլ Ադանի ազդեցութիւնը ցոյց են տալիս։

«Երիտասարդ գրողների մէջ Բ. Լազար չատով չատ մեծ հեղինակութիւն ստացաւ։ Երբ պ. Ֆրանսիս Վիէլէ Գրիֆֆին, պ. Հանրի դը Ռէնիէ և պ. Պօլ Ադամի հետ «Entretiens politiques et littéraires»-ը (Քաղաքական և գրական խօսակցութիւններ) հիմնեց, Լազար անմիջապէս ամենքին ուշադրութիւնը գրաւեց գրականութեան և բարքերու իբրև տհարկու քննադատ։ Անխնայ ուժգնութեամբ յարձակվեց օրվայ վարպետներին, պատմական և բնապաշտ գրագէտների վրա, որոնց իրանց փառքի և հռչակի կատարը հասել էին։ Լազար դիւրին քննադատութիւններով զոհ չէր լինում երբեք. երբ իր անմիջական նախորդների գործերը քննադատում էր, մի և նոյն ժամանակ ցոյց էր տալիս նրանց, թէ ինչպէս պէտք էր ըմբռնել արուեստը, նրանց առաջ պարզում էր չատ գեղեցիկ կերպով յղացված արուեստի տեսութիւններ։ Իր դաւանանքն էր մի տեսակ խորհրդանչականութիւն (symbolisme), որ կեանքից կտրված չը լինի, սակայն կեանքի վաղանցուկ (transifoire) ձևերով չը զբաղվի։ Ու տեսութեան միացնելով գործը՝ գրեց «Le miroir des Légendes»-ը—(Աւանդութիւնների հայելին) և պատրաստում էր «La Lorte d'Ivoire» (Փղոսկրեայ դուռը), և «Les porteurs de torches» (Ջահակիրներ)։

Մինչդեռ իր ժամանակի երիտասարդութիւնը մեղադրվում էր կեանքից հեռու, փակ չրջաններում ապրելու յանցանքով, Լազար ընդհակառակը կծու էջերի մէջ խայտառակում, հրապարակ էր հանում ընկերութեան գլխաւոր ստութիւնները...

Հակառակ իր քնքուշ գաղափարների, քըննադատի իր նշանաւոր տաղանդով ճանապարհ բաց արեց իրան մեծ օրգաններում։ Թէպէտև իր մահվան աւիթով «Journal»-ը, «Echo de Paris»-ն, «Figaro»-ն լուռ մնացին, հակառակ այն բանին, որ Լազար այդ Թերթերի աջողութեան և տարածումին մեծապէս նպաստել էր»։

Ու, իրաւ, Լազար գրական յայտնի դէմքերի՝ ինչպէս, Բուրժէի, Զօլայի, Դօդէի, Մօպասանի, վերջապէս բոլոր աչքի ընկնող գրագէտների վրա իր քննադատական ուսումնասիրութիւնների չարքը հրատարակեց «Figaro»-ի մէջ, որ լինելով գերազանցօրէն բուրժուա մի օրգան, փութկոտութեամբ հիւրընկալեց Լազարի նման ըմբոստ ու քանդող մտքի արտադրութիւնները։ Ահա այդքան մեծ էր Լազարի տաղանդի հմայքը։ Ցետոյ այդ ուսումնասիրութիւնները լոյս տեսան «Ceux d'aujourd'hui et Ceux de demain»—Այսօրվայ և վաղվայ գրագէտները վերնագրով մի հատորում։ Գրքի վերնագրը արդէն բնորոշ է և ցոյց է տալիս Լազարի նախասիրութիւններն ու տեսութիւնները։ Այսօրվայ-ները այն կարգի գրագէտներից են, որ թէպէտև փառքի և պատւի հասած, չեն արժում իրանց նկատմամբ տածված յարգանքը. ճշմարիտ գրագէտներ չեն։ Իսկ վաղվայ-ները նրանք են, որ թէպէտև ունեն գեղարուեստագէտի խոր կարողութիւններ, ստեղծագործութեան մեծ տաղանդ, բայց բուրժուաների կողմից արհամարհված, փառքից զուրկ են։

Բ. Լազարը քննադատի հոյակապ էջեր ունի այս հատորում. եթէ արդէն յօդուածս երկարած չը լինէր առաջ կը բերէի մի քանի նըմուչներ։ Գուցէ ուրիչ անգամ։

Լազարի գեղարուեստական ամենագեղեցիկ արտադրութիւնները ամփոփված են «Ջահակիրներու» գրքի մէջ։ Հրաշալիօրէն ճոխ լեզւով ու, ինչպէս Գիյեառ յատկանչում էր, գրեթէ քնարերգական չունչով գրի առնված պատմուածքների մի հաւաքածու է «Ջահակիրներ»-ը, որը արժէր ծայրից ծայր թարգմանել։ Ֆրանսերէն լեզւով արտադրված քիչ գործեր կան, որոնք հրապուրիչ լինեն այնքան, որքան Լազարի այդ պատմուածքները։

Թիֆլիս

Տիգրան

քին գործերի մինիստր դուքս Կոմուրը։ Կան և ուրիշ շատ նշանաւոր ու բարձրաստիճան անձեր։ Մինիստրների ժողովում արդէն քննութեան է ենթարկվել՝ Ռուսաստանի դէմ յաղթական պատերազմ մղելու ծրագիրը։ Այդ կուսակցութեան ջանքերով Եապօնիան օգոստոսի 25-ին հեռագրով բողոք է ուղարկել Պետերբուրգ. բողոք Մանջուրիայի գրաւման և առհասարակ Ռուսաստանի յարձակողական քաղաքականութեան դէմ Կորէայում։ Այդ առիթով ռուսաց դեսպան դուքս Ռօզէնը Տօկիօում այցելել է արտաքին գործերի մինիստրութիւնը և յայտնել, թէ Ռուսաստանը ոչ մի վերջնական պատասխան չէ կարող տալ, մինչև որ թագաւորութիւն չը սառնայ այդ բողոքի մասին։ Եապօնական կառավարութիւնն իսկոյն ուղարկում է պահանջված բացատրութիւնները և դրա հետ միասին պահանջում է, որ «վերջնական պատասխան տայ 3 շաբաթվայ ընթացքում, որից յետոյ նա ձեռք կառնէ վճռական միջոցներ»։

Ահա այդ դրութեան մէջն է հեռաւոր Արևելքի հարցը։ Եապօնական կառավարութիւնը վճռել է սպասել, մինչև որ Ռուսաստանը վերջնականապէս հեռացնէ իր զօրքերը Մանջուրիայից, այսինքն մինչև հոկտեմբերի 18-ը, իսկ մինչև այդ օրը հասնելը ամեն տեսակ պատրաստութիւններ տեսնել պատերազմի համար։

—

Լոնդոնից. Բաւական երկար ժամանակ է, որ Եապօնիան պատրաստութիւններ է տեսնում Ռուսաստանի աշխարհակալական ձգտումների առաջն առնելու համար։ Հէնց այդ նպատակով նա Մանջուրիայում հաստատել է լրտեսների մի մեծ կազմակերպութիւն, որի շնորհիւ ամենաճիշդ տեղեկութիւններ է ստանում Ռուսաստանի գործողութիւնների մասին։

—«Անկասկած, ասում է ճանապարհորդ Լինջը, եապօնացիները կարող են պարծենալ իրանց տեղեկատու բիւրօով։ Նրանք վաղուց արդէն լրտեսներ ունեն ամբողջ Մանջուրիայում, այնպէս որ ռուսների գործունէութեան մասին Տօկիօում նոյնքան լաւ տեղեկութիւններ ունեն, որքան և Պետերբուրգում։ Եապօնացիները նորերս կազմել են Մանջուրիայի քարտէզը, որը աւելի հարուստ և ճիշդ տեղեկութիւններ է տալիս, քան թէ մի որ և է ռուսական քարտէզ»։

—

Կորէան —կռւախնձոր. Միայն Մանջուրիայի գրաւումը չէ, որ գրգռել է Եապօնիայի զայրոյթը Ռուսաստանի դէմ։ Վերջինս սերտ յարաբերութիւններ է կապել Կորէայի փոքրիկ կայսրութեան հետ և այդտեղ էլ առաջ է տանում իր աշխարհակալական և շահագիտական քաղաքականութիւնը, ուստի աւելի ու աւելի զօրեղանում է եապօնական դժգոհութիւնը։ Կորէան դարձել է մի նոր կռւախնձոր երկու հարևան պետութիւնների համար և Եապօնիան արդէն խիստ սպառնալիքներ է թափում իր հակառակորդի հասցէին։

—Վերջին ժամանակներս, ասում է եապօնական «Տօկիօ-Նիչի-Նիչի» թերթը, ռուսների գործունէութիւնը Եալուի ափերին վտանգ է սպառնում Կորէայի անկախութեանը և մեր քաղաքացիները աչալուրջ կերպով հետևում են գործերի ընթացքին։ Ռուսաստանը մեծ ապագայ պիտի դժուար թէ Արևելքում բանած իր ազդեցիկ քաղաքականութեան համար և կորէական կառավարութիւնը ճաշակելու է դէպի Ռուսաստանն ունեցած բարեկամութեան դառն պտուղները»...

—

Չինաստանը ո՞ւմ դաշնակիցն է. Եապօնիան շատ լաւ զգում է, որ այնքան էլ հեշտ չէ Ռուսաստանի նման մի մեծ պետութեան հետ պատերազմելը, ուստի ամեն կերպ աշխատում է իր դաշնակիցների թիւն աւելացնել։ Նա վստահ է, որ Անգլիան ու Ամերիկան պաշտօնական կամ ոչ պաշտօնական ճանապարհով օգնելու են իրան, սակայն այդ դեռ բաւական չը համարելով, մօտ օրերս միկադօն Չինաստան է ուղարկել իր ադիւտանտ մայոր Իտօին մի շարք յանձնարարութիւններով։ Իտօն պէտք է քննէ, թէ արդեօք հիւսիսային Չինաստանում գտնված եապօնական զօրնիզօնները բաւարար դրութեան մէջ են և թէ պատերազմի դէպքում կարելի է, արդեօք, յոյս դնել Չինաստանի աջակցութեան վրա։ Եապօնիան խոստանում է ազատել Մանջուրիան Ռուսաստանի ձեռքից և նորից վերադարձնել չինական Բօգդիխանի իշխանութեան տակ, բայց այն պայմանով, որ նրա նաւահանգիստները բաց լինեն միջազգային առևտրի համար և Եապօնիան իրաւունք ունենայ այնտեղ գաղութներ հաստատելու։

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

—

Մակեդոնացիները յաղթում են.—Մակեդոնական ներքին կազմակերպութեան գլխաւոր օրգան «Автономія»-ի հաղորդած հեռագրական տեղեկութիւններից երևում է, որ Մակեդոնիայում նորից բռնկվել է ապստամբութիւնը՝ ուժեղ թափով, մեծ ծաւալով.

—«Օգոստոսի 22-ին Ալի-Բաշի սարի վրա կայացած համաժողովի որոշման համաձայն սեպտեմբերի 5-ին սկսվեց ապստամբութիւնը Բալլօցի շրջանում, իսկ 14-ին և բոլոր միւս շրջաններում»։

Դրանից յետոյ թերթը տալիս է բերում ապստամբական շրջանների և նրանց գլխաւոր առաջնորդների ցուցակը, ապա տալիս է մի քանի տեղեկութիւններ դրանց առաջին գործողութիւնների մասին։ Ահա այդ տեղեկութիւնների ամփոփումը։

—Գերինեան շրջանում, Մեխոմիա քաղաքի մօտ ապստամբները երկարատև (14-ին սեպ.) կռիւ են մղում թիւրքական զօրքերի դէմ. կռիւ հրացաններով, ռումբերով և եաթաղաններով։ Թիւրքերը 6000-ից աւելի էին, իսկ ապստամբները միայն մի քանի հարիւր։ 4 օր շարունակվում է կռիւը. վերջապէս ապստամբները եաթաղաններով ընկնում են զօրքի մէջ և սարսափելի ջարդ տալիս նրան. մերթ ընդ մերթ ռումբեր են գցում և թիւրքական սառկոտորածն աւելի մեծացնում։ Զօրքը փախուստի է դիմում, պատերազմի դաշտում թողնելով առհասարակ քանակութեամբ հրացաններ, ռազմամթերք, որ և ապստամբների սեփականութիւնն է դառնում։ Սպանված են 2 բինբաշի (գնդապետ) և բազմաթիւ օֆիցէրներ ու զինուորներ։ Թիւրք ընտանիքներն էլ փախչում են Մեխոմիա քաղաքից, որը այդպիսով ապստամբների ձեռքն է անցնում»...

—Մակեդոնական հրոսակախմբերը, ասել է խմբապետ Գիրջիկովը, դեռ վհատված չեն։ Նրանք ունեն բաւականաչափ մարդիկ, զէնքեր և ռազմամթերք և պատրաստվում են ձմեռվայ ընթացքում էլ շարունակելու պատերազմական գործողութիւնները։ Մօտ 20,000 հոգի վճռել են ձմեռն էլ զէնքերը ցած չը դնել և շարունակ անհանգիստ անել թիւրքական զօրքերին։ Այդպիսով Թիւրքիան ստիպված կը լինի զէնքի տակ պահել Մակեդոնիայում 300,000-ի չափ զօրք։ Սահմանամերձ ու սովը հալածականօրէն կը ոչնչացնեն այդ թեի կէսը։ Գարունը բացվելուն պէս Մակեդոնիայում տեղի պէտք է ունենայ ընդհանուր զինակոչ. ապստամբական դրօշակի տակ հաւաքվելու են 80,000 բուլգարներ և այն ժամանակ վայ Թիւրքիային»...

Ապստամբները յոյս ունեն, աւելացնում է թերթը, որ անպատճառ ազատելու են Մակեդոնիան և Կ. Պոլսում իրանք են թելադրելու հաշտութեան պայմանները։

—

Յոյների բռնած դիրք. Կոստանդնուպոլսի յունական միտրոպոլիտը, ասում է «Автономія» թերթը, անձամբ մասնակից է արել թիւրքերին, թէ բուլղարական [illegible] գիւղերը պէտք է կոտորել և այրել։ Յոյների կողմից կաշառված թիւրք իշխանաւորները բռնութեամբ ստիպում են, որ բուլղարները յունադաւանութիւն ընդունեն և յունական պատրիարքարանին հպատակվեն։ Վայ նրան, ով կը հակառակվի. ծեծ, տանջանք և բանտն է այդպիսի ըմբոստի բաժինը։ Սօլունի գաւառում միւլիազիմը սարսափելի կերպով ծեծել է տալիս 18 գիւղացիների, որոնք չեն համաձայնում իրանց յունադաւան անուանել։ Բացի դրանից նա շատերից վերցնում է անցագրերը և այնտեղ «բուլղար» բառի տեղ գրում «յոյն»։ Եւ այդ ամբողջ ծրագրի հեղինակը Սօլունի յունական միտրոպոլիտն է։ Նա ճանապարհորդում է բուլղարական գիւղերում և համոզում, որ բուլղարները յունադաւանութիւն ընդունեն։ Սարումիցկայի միտրոպոլիտն էլ նոյնն է անում իր շրջանում։ Նրանք ամեն տեղ խոստումներ են տալիս, որ եթէ բուլղարները յունադաւանութիւն ընդունեն, այն ժամանակ թիւրք կառավարութիւնը նրանց կը հովանաւորէ, հարկերը կը պակասեցնէ և ամեն տեսակ բարիքներ կը հասցնէ»։

Դառն իրականութիւն։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, սեպտեմբերի 16-ին

Րաֆֆիի ծննդավայրը եղող Փայաջուկ գիւղը վերջապէս այս տարի բաց արեց իր դպրոցի դռները, շնորհիւ կովկասցի պ. Ստեփան Թաղէոսեանցի անդուլ ջանքերի։ Ուսուցիչներ հրաւիրված են՝ Ներսիսեան դպրոցի ընթացաւարտ Յովհաննէս Պետրոսեան և Լիլաւայի դպրոցի վեցերորդ դասարանից դուրս եկած Սահակ Ստեփանեան։ Նոյն դպրոցի ջանքերով և խրախոյսներով նաև բացվելու են Սալմաստի մի քանի ուրիշ գիւղերում դպրոցներ։

Ամենամխիթարական երևոյթը այն է, որ Լիլաւայի դպրոցից ընթացաւարտ տեղացի ուսուցիչներ գիւղական դպրոցներում պաշտօն են ձեռք բերում և Պարսկաստանը ազատում են պատահական և անյարմար ուսուցիչներից։ Եթէ Լիլաւայի դպրոցը նոյն ուղղութեամբ մի քանի տարիներ ևս շարունակվէր, մի քանի տասնեակ տեղացի ուսուցիչներ աւելի կունենար Պարսկաստանը. բայց ափսոս, որ այդ դպրոցն էլ այս տարի զոհ գնաց կուսակցական կոյր կրքերի և անձնական սառը հաշիւների. այդ մասին մի ուրիշ առիթով կը գրենք։ Նոյն դպրոցի ընթացաւարտներից Արմենակ Մկրտչեան վարձված է Ղալասար գիւղի համար ուսուցիչ, իսկ երկուսն էլ Բաշտի և Ղոզվինի դպրոցների համար են վարձված։

—

Ինչպէս վերջերս պ. Երուանդ Ֆրանգեան «Մշակ»-ում գրել էր Ղալասար գիւղի գրադարանի կանոնաւորութեան և ճոխութեան մասին, ի հարկէ համեմատած ուրիշ գիւղերի հետ, աւելորդ չի լինի յայտնելու, որ նոյն գիւղը Սալմաստականի մէջ միակն է, որ ունեցել է կանոնաւոր դպրոց, գրադարան, թատրոն և մանաւանդ կանանց բարեգործական ընկերութիւն, որը օգնում է աղքատներին և աղջկանց դաստիարակութեան գործին, վարժուհու ռոճիկը ինքը վճարելով։ Ղալասարի կանայք առաւել գովելի են իրանց այս գործում, մանաւանդ եթէ նկատի ունենանք, որ դրանք կենտրոնից առաջ սկսել են շարժվել. դեռ Թաւրիզը իր կանանց բարեգործական ընկերութիւնը չունէր, երբ որ Ղալասարի գիւղացի կանանց ձեռքով կազմվեց բարեգործական ընկերութիւնը. մեծ պատիւ է այս։ Բացի այդ, Ղալասար գիւղը միւս գիւղերից շատ է տարբերվում իր կրթված և քաղաքավարի հասարակութիւնով, հարուստներով, փողոցների մաքրութեամբ և ընկերական յարաբերութիւններով։

—

Սաուջբուլաղից վերադարձիս երկրորդ անգամ Ուրմիայում մի սառ օր մնալով, նկատեցի, որ անհրաժ, ընտանեկան յարկի տակ օրինաւորութեամբ գրաւված ընտանիքների մէջ, տարիների բաղդատմամբ հայերը 90 առ 100 տոկոս են կազմում... որքան պատուաբեր (?) գործ հայի համար.... Հայը, Պարսկաստանում չահելու մենչեւ կուրացած հետևում է այս անարգ արհեստին, մանաւանդ ընտանեկան սուրբ յարկի տակ, անկասկած իր պատիւն էլ վրա տալով, որովհետև տարակոյս չը կայ, որ պարսիկ արիկան հայ կանանց և օրիորդների ներկայութեամբ հարբելով, մի քանակ օղու կամ գինու հետ պիտի պահանջէ...., Ե՞հ, ամօթ է նոյն իսկ յիշելը։ Նոյն ցաւալի երևոյթը նկատվում է ամբողջ Պարսկաստանում, Թաւրիզում, Թեհրանում, Ուրմիայում, Բաշտում, Սալաշոնում, և այլն։ Մինչդեռ հայերից շատ աւելի չահասէր պարսկահպատակ ասորիներ և հրէաներ աւելի նուաղ թուով են պարապվում այդ կեղտոտ արհեստով։ Այս երևոյթը ինչ բանի պէտք է վերագրել։ Եթէ պատճառը միայն շահասիրութիւնն ընդունենք, նոյն արհեստը աւելի լայն ծաւալով պէտք է նկատէինք նաև ասորիների և հրէաների մէջ, որոնք հայերից շատ աւելի շահասէր են։ Եթէ բարոյական զգացմունքների բացակայութեան վերագրենք այդ բանը, դարձեալ բուն պատճառը չենք կարող նկատել այն, քանի որ ասորիների մօտ այդ զգացմունքը աւելի շատ է բացակայում. ի հարկէ հրէաների համար նոյն բանը չենք կարող ասել։ Ուրեմն, ինչ բանի վերագրել։

—

Պարսից կառավարութիւնը բազմաթիւ զօրքեր է հաւաքել թիւրքաց սահմանագլխի մօտ Սալմաստում, Ուրմիայում և Սաուջբուլաղում. ինչպէս ժամանակին հաղորդել եմ «Մշակին», զօրքերի այս հաւաքումը տեղի է ունեցել թիւրքահպատակ քրդերին պատժելու համար, որոնք ուզում էին յարձակվել և թալանել վերոյիշեալ երեք գաւառները. բացի այդ պարսից զօրքը նպատակ ունէր քանդելու Շէյխ Աբէդուլլահի որդի Շէյխ Սադըքի պարսկական հողի վրա կառուցած բերդը։ Բայց այդ բերդի քանդումը առայժմ յետաձգված է, որովհետև տարակուսութիւն է եղել, որ այդ հողը Օսմանցւուն է պատկանում։ Այս սեփականութեան խնդիրը վճռելու համար Պարսիկներից և Օսմանցիներից խառն մի յանձնաժողով է կազմված, որ այժմ տեղի վրա քննութիւն է կատարում։

—

Սալմաստի Սարփարասը Ընձակ վարդապետի հեռանալուց օգտվելով, արդէն սկսել է հայաբնակ գիւղերից խոշոր գումարներ վերցնել և հարստահարել ժողովուրդը։ Որովհետև Ընձակ վարդապետի ներկայութեան ժամանակ չէր կարողանում հարստահարել ժողովրդին, այժմ յայտարարում է, որ «այդ գրկանքը՝ հայերին փոխ տուած 2000 թուման է, որը գանձելու է տոկոսիքով միասին...»։

Դոկտ. Կ. Փաշայեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Աւստրիական Ֆրանց-Յօզէֆ կայսրի ջանքերը ունգարական մինիստրութիւն կազմելու՝ մինիստր-նախագահ նշանակելով Սէլլին, անյաջող անցան։ Ինչպէս հաղորդում է «Berliner Tageblatt» լրագրի թղթակիցը Բեռլինից, Սէլլ Ֆրանց-Յօզէֆ կայսրի մօտ ունեցած տեսակցութեան ժամանակ դրականապէս յայտնեց, որ ներկայ րոպէում երբեք չի համաձայնի յանձն առնել նոր մինիստրութիւն կազմել և լինել մինիստր-նախագահ, որովհետև այն հիմնական պատճառները, որոնք ստիպեցին նրան առաջին անգամ հրաժարվել մինիստր-նախագահի պաշտօնից, այժմ մնում են նոյնը և մինչև անգամ աւելի սուր կերպարանք են ստացել։ Լուրերին նայելով, Սէլլ առաջարկեց կայսրին մինիստրութիւն կազմելը յանձնել կոմս Իւլի Անդրաշիին։ Ֆրանց-Յօզէֆ կայսրի որոշումը՝ ներկայ չը լինել Բուդապեշտում Դունայի վրա նոր շինած կամուրջի բացման հանդէսին, Ունգարիայում բացատրվում է, որպէս սաստիկ դժգոհութեան արտայայտութիւն կայսրի կողմից դէպի ունգարական կառավարող շրջանները և ժողովուրդը։

—Ունգարացիները, որպէս զէնք իրանց պայքարի աւստրիական թագի դէմ, ընտրեցին մի շատ լուրջ միջոց. նրանք վճռեցին չը վճարել սահմանված հարկը։ Արդէն մի ամբողջ շարք որոշումներ են կայացել այս մասին։ Բուդապեշտի քաղաքային ինքնավարութեան ֆինանսական մասնաժողովը յայտնում է, որ անցեալ տարվայ հետ համեմատելով՝ այս տարի քաղաքային եկամուտները պակասել են, վերոյիշեալ որոշման պատճառով, 2½ միլիոն կրոնով։ Ամբողջ սեպտեմբեր ամսի ընթացքում Պեշտում, իբրև պետական հարկ, հաւաքված է 384,318 կրոն. 51,256 հոգի բոլորովին չեն վճարել հարկ։ Մի և նոյն ժամանակ ունգարական պարլամենտական գործիչները համենում են չը վճարել այն գումարը, որ Ունգարիան վճարում է ամեն ամիս Աւստրիային ընդհանուր պետական ծախքերի համար։

—Էմին-էլ-Սուլթանէ, պարսկական նախկին մեծ-վէզիրը (սադրազամը), որը պաշտօնանկ եղաւ անգլիական ինտրիգների շնորհիւ, ինչպէս հաղորդում է «Zeit» լրագրի թղթակիցը, ուղևորվեց Եւրոպա։ Ամենից առաջ նա կերթայ Վիէննա, ուր Տէրէզիանումում սովորում է նրա որդին։ Թեհրանի հոգևորականութիւնը շատ աշխատում էր, որ նա մնար Թեհրանում։ Նոր նշանակված պարսկական ներքին գործերի նոր մինիստրի մասին «Zeit» լրագրի թղթակիցը, ի միջի այլոց, ասում է հետևեալը. «Կայսերական պրինց և Թեհրանի նահանգապետ Էյնէ-էդ-Դովլէ, հէնց նա, որը հարկերով ծանրաբեռնեց հասարակաց կանանց և հացթուխներին, առաջացրեց հացի թանգութիւն և ժողովրդական յուզմունքներ այդ թանգութեան պատճառով, կը կատարէ նոյնպէս և մեծ վէզիրի պարտաւորութիւնները. բոլոր գործերը և դոկումենտները պէտք է անցնեն նրա ձեռքով և վաւերացվեն նրա կնիքով. Էյնէ-էդ-Դովլէն մեծ վէզիր չը նշանակվեց այն պատճառով, որ նա կայսերական պրինց է։ Բացի դրանից դրա դէմ կը բողոքէին բոլոր եւրոպական պետութիւնները, որովհետև նա թշնամաբար է տրամադրված դէպի օտարազգիները։ Սադրազամի պաշտօնանկութեան պատճառով շատ խախուտ դարձաւ պարսկական մաքսատների դիրեկտոր բէլգիացի Նաուսի դրութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 հոկտեմբերի

ԴԱՐՄՇՏԱԴՏ։ Ռուսական Կայսերական Ընտանիքը, մեծ դուքսը և մնացած բարձրագոյն անձինք տեղափոխվեցին Վոլֆսգարտէն ամրոցը։

ԲԵԼԳՐԱԴ։ Ճշգրիտ աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, դատապարտված փոքր աստիճան ունեցող օֆիցէրներին ներում չի շնորհվի։

ՍՕՖԻԱ։ Յեղափոխական ներքին կազմակերպութեան ներկայացուցիչները հերքում են այն տեղեկութիւնը, թէ կոմիտէտը վճռել է դադարեցնել գործունէութիւնը Մակեդոնիայում. ընդհակառակն, նա կը շարունակէ կռիւը մինչև վերջին ծայրը։

ԼՈՆԴՈՆ։ Լաւ տեղեակ դիպլօմատիական շրջաններում կարծում են, որ խռերի գրութիւնը Հեռու Արեւելքում բարւոքվեց։

ՀՌՈՄ. Իտալական լրագիրները ցաւակցութիւն են յայտնում Թագաւոր Կայսրի դէպի Իտալիա ճանապարհորդութեան յետաձգման մասին. ամբողջ իտալական մամուլը միաբերան դատապարտում է մի քանի չար սակաւանձանց անյարմար լեզուն։

ՓԻԶԱ։ Գեներալ-ադիւտանտ Իշխան Դոլգորուկի յանձնեց Թագաւորին Թագաւոր Կայսրի ինքնագիր նամակը, որի մէջ Նորին Մեծութիւնը ցաւակցութիւն է յայտնում, որ Հռոմի արդէն նշանակված այցելութիւնը յետաձգված է։

Կ. ՊՈԼԻՍ։ Սուտ է այն տեղեկութիւնը, թէ ռուսական և աւստրիական դեսպանները պահանջեցին քրիստոնեայ ընդհանուր նահանգապետներ նշանակել Մակեդոնիայի համար։— Սուլթանի որդի պրինց Մէհմէդը վախճանվեց սեպտեմբերի 29-ին Թոքերի բորբոքումից։

ՓԱՐԻԶ։ Իտալական արքայական զոյգը ժամանեց կայարան հոկտեմբերի 1-ին։ Դուրս գալով վագոնից, Թագաւորը համբուրվեց Լուբէի հետ։ Դիմաւորումը շատ սրտագին էր։ Ահագին ամբոխը ողջունեց Թագաւորին և Թագուհուն։— Կայարանում արքայական զոյգին դիմաւորեցին Լուբէն, նրա ամուսինը և Կոմբ ու Դէ լ' Կասէ մինիստրները և գնացին արտաքին գործերի մինիստրութիւնը։ Ժամը 5-ին Թագաւորը և Թագուհին եկան Ելիսեան պալատը այցելութիւն անելու Նախագահին։— Այստեղի եապօնական միսիան հաղորդում է հեռագիրը. «Բանակցութիւնները Մանջուրիական և կորէյական հարցերի վերաբերմամբ բնական ընթացք են առնում, ոչինչ չէ երեւում, որ պատերազմ կը լինի Եապօնիայի և Ռուսաստանի միջեւ։ Արտասահմանում տարածված երկիւղալի լուրերը զուրկ են հիմքից»։

ԼՈՆԴՈՆ։ Լանդադոուն և Կամբօն ստորագրեցին մի պայմանագիր հինգ տարի ժամանակով այն բանի մասին, որ իրաւաբանական բնաւորութիւն ունեցող այն վէճերը, որոնք վերաբերում են Անգլիայի և Ֆրանսիայի միջեւ գոյութիւն ունեցող դաշնագրերի բացատրութեանը, պէտք է յանձնվին Հաագայի մշտական միջնորդ դատարանի լուծման այն դէպքում, եթէ նրանց կարելի չէ լինում կարգադրել դիպլօմատիական ճանապարհով և դա կարող է գործադրվել միայն այն պայմանով, որ վէճերը չը վերաբերվեն դաշնագիր կապող պետութիւնների ոչ կենսական շահերին, ոչ անկախութեան, ոչ պատւին։

ՅԱԼՏԱ։ Թաթարների գաղթականական շարժումը տարածվում է։

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ։ Տօկիոյից հեռագիրը հաղորդում է, որ հիմքից զուրկ են այն լուրերը, որ Եապօնիան ընդարձակ պատրաստութիւններ է տեսնում պատերազմի համար։ Զափազանցրած են լուրերը ժողովրդական յուզմունքի մասին։ Պրոգրէսիստների մանիֆէստի նշանակութիւնը ուռցրած է արտասահմանում. այստեղ նրան քիչ նշանակութիւն են տալիս։— Զօրահանդէսին գեներալ-ադիւտանտ Ալէքսէեվ այն համոզմունքը յայտնեց, որ եթէ հանգամանքները կը պահանջեն, այն ժամանակ, Բարձրագոյն Առաջնորդի կոչի համեմատ, ռուսաց փառաւոր նորքի զաւակները կը կանգնեն որպէս մէկ մարդ ռուսական գործի պաշտպանութեան համար։ Որոտալից «ուռան» և «Տէր, պահեա զԿայսրն» պատասխան էր այդ խօսքերին։— Վերջին օրերում եապօնական ամբողջ մամուլի լեզուն աւելի խաղաղասէր է։

ՌԻՍՏՕՎԱՑ։ Այստեղ լուրեր հասան, որ ապստամբները Թակարդի մէջ ընկան, որի ժամանակ Սարաֆօվ, իբր թէ, սպանվեց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԲԱԳՐԱՏ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԽԱՉԱՏ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ.
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։
19—100

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
ՌՈՒՍԱՑ ՕՊԵՐԱ
Ուրբաթ, հոկտեմբերի 3-ին
կը ներկայացվի
ԿԱՐՄԷՆ
Օպերա 4 գործ. երաժշտ. Բիզէի։
Մասնակցում են.— Տ-ռ. Կարատավինա, Կարրի, Լեյինա, Փեօդորովա. Պ.պ. Դարսկի, Իլիշչենկօ, Ամիրջան, Ֆեօդորով, Գրինեվ. Գավրիլով
Սկիզբը երեկոյեան 8 ժամին։
Աշխ. Վաղը, շաբաթ, հոկտեմբերի 4-ին, կը ներկայացվի «Ցառ սառ» Վալցազրդեան գրչերով. Կիրակի, հոկտեմբերի 5-ին, կը ներկայացվի «Ժիզն զա Ցարիա» Երկուշաբթի, հոկտեմբերի 6-ին, Ներկայացում հանրամատչելի գներով. կը ներկայացվի «Ռուսալկա»։
1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հաղորդում է ի տեղեկութիւն ամենքի, որ կենտրոնական բուժարանին կից (Մուխրանսկայա փողոց) մանկաբարձուհիների փոխադարձ օգնութեան Թիֆլիսի ընկերութեան կողմից հիմնված է մանկաբարձուհիների ցերեկվայ և գիշերվայ հերթապահութիւն առաջին օգնութիւնը հասցնելու ծննդկան և յղի կանանց։ Խորհրդի և նախնական օգնութեան համար վերցնվում է 1 րուբլի վճար։ Այս դրամները մտնում են յիշված ընկերութեան դրամարկղը, որ նոյնպէս հերթապահութիւն է սահմանել և մանկաբարձական խնամատարութեան։
1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, հոկտեմբերի 18-ին, նշանակված է անդամների
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ՝
քուէարկելու այն անձերին, որոնք առաջարկված են որպէս անդամի թեկնածու և քննելու մի քանի ընթացիկ հարցեր
1—3

Վ ր ի ն ի ւ յ ր հ ա դ
Արաքս հիւրանոցում
կան դատարկ սենեակներ, կանտորներ, սկլադներ նաև ճաշարան իր խոհանոցով, որոնք տալիս ենք վարձով շատ մատչելի գներով։
1—6

ԲԺԻՇԿ
Ի. Դ. ԲԷԿՏԱԲԷԿԵԱՆ
Վերադարձաւ արտասահմանից։
1—1

Լոյս տեսաւ
1904 թ. Մ. ՉՄՇԿԵԱՆԻ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ
Կիլիկիոյ նորօծեալ կաթողիկոսի և հանգուցեալ արքեպիսկոպոս Մելքիսեդեկ Մուրադեանի պատկերներով։
Հասցէն՝ Թիֆլիս Մակար Չմշկեան։
1—10

!!ՊԱՀԱՆՋԵՑԷՔ!!
Լոյս տեսաւ
ԵՂԲ. Գ. ԵՒ Մ. ՓՐԻԴՕՆԵԱՆՆԵՐԻ
Կովկասեան Ամենամեծ ՏՆԿԱՐԱՆԻ
պտղատու ծառերի պատկերազարդ կատալօգը
Տնկարանը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու ՍԿՐԱ կայարանի մօտ

ԿԱՏԱԼՕԳՆԵՐԸ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ
ԵՆ ՁՐԻԱԲԷՍ.



М. Е. Придонову, въ Тифлисъ, Сергіевская, 11.
2—12

Հաւլաբարի հակա-ալկոհոլական ընկերութեան Ն. Ն. Մուրաշկօի թատրոնում տրված ժողովրդական ներկայացումների

ՀԱՇԻՒ
Ա. ՏԱՐԻ

Նոյեմբերի 23-ից անցեալ տար.—1-ն Սեպտեմբեր ներկ. թ.

№№	Խաղացված պիէսներ	Մուտք		Ծախս		Հանդիսականների թիւը
		Րուբլի	Կոպ.	Րուբլի	Կոպ.	
1	«Խաթաբալա», կոմ. 4 գործ. Սունդուկեանի.	—	—	29	44	40
2	«Ղարաբաղի աստղագէտը», փոխադրութիւն.	18	42	32	—	108
3	«Էլի մէկ զոհ», դրամա 5 գործ. Սունդուկ.	63	60	42	42	262
4	«Քանդած օջախ», կոմ. 3 գործ. Սունդուկ.	59	85	46	06	270
5	Պէպօ, կոմ. 3 գործ. և վօդէվիլ	19	85	46	43	120
6	«Ջոնի փոխարէն զոհ» 3 գործ. կոմ. և վօդ.	21	39	35	87	145
7	«Գաղտնի այծ», դրամա 4 գործ.	41	70	40	04	201
8	«Ասլան Բալասի» դրամա 4 գործ. և վօդէվիլ	90	66	77	23	273
9	«Կեանքի խնճոյքում», դրամա 4 գործող.	20	70	36	26	156
10	«Քոյր և եղբայր», դրամա 5 գործողութ.	39	65	44	14	198
11	«Սամէլ», դրամա 5 գործողութ. և վօդէվիլ.	76	60	66	49	253
12	«Ներագործի ընտանիքը», դրամա 5 գործ.	47	90	41	90	209
13	«Վաշխառու», դրամա 5 գործ. և վօդէվիլ	43	30	44	68	256
14	«Արշակ Բ» դրամա 5 գործող. և վօդէվիլ	76	30	53	36	298
15	«Անմեղ մեղաւորներ», դր. 4 գործ. և վօդ.	52	30	52	30	231
16	«Համբոյր» և վօդէվիլներ	35	55	88	83	170
17	«Մայրական սէրը», դր. 6 գործ. 1 պատկ.	36	65	38	56	172
18	«Բարեգործութեան դիմակի տակ», դր. 5 գր.	23	15	37	40	121
19	«Կողոպտված պսակ», դրամա 5 գործող.	49	75	49	86	221
20	«Երուանդ II», դրամա 5 գործ. և վօդէվիլ	60	50	57	56	256
21	«Լուսի և Դիւբէ», դրամա 5 գործ. և վօդ.	30	85	40	64	152
22	«Ճակատագրից չես փախչիլ», դր. 4 գ. և վօդ.	53	60	58	60	240
23	«Ասլան Բալասի», դր. 4 գործ. և վօդ.	67	73	53	08	282
24	«Պատժվածը», 2 գործողութեամբ և վօդ.	37	20	34	99	188
25	«Խանում», կոմ. 3 գործողութեամբ	61	10	61	10	231
26	«Արդիւնաւոր պաշտօն», կոմ. 4 գործողութ.	20	20	36	95	118
27	«Հարբեցի աղքատները», դր. 5 գործ 2 պատկ.	42	60	48	57	202
28	«Թուղթ խաղացողի կեանքը», դր. 5 գործ.	33	67	33	67	170
29	«Համբոյր» և վօդէվիլներ	75	36	75	36	240
30	«Կոյր», դրամա 5 գործողութեամբ	53	06	40	30	255
31	«Քոյր և եղբայր», դրամա 5 գործ.	58	—	45	23	262
32	«Կեանքը», դր. 2 գործ. և վօդէվիլներ	19	—	33	44	103
33	«Պատիւ», դր. 4 գործողութեամբ	48	25	43	75	241
34	«Թուղթ խաղացողի կեանքը»	43	40	32	77	231
		1521	94	1544	17	6870

Մուտք. ընդհանուր մուտքն առաւելում է տոմսակի կարկչօններից, որ գտնվում է Մուրաշկօի մօտ, որն հաւասար է 1521 ր. 94 կ.։ Վնաս առ 1-ն սեպտեմբերի 22 ր. 23 կ.։ Ընդամենը—1544 ր. 17 կ.։

Ելք ծախս 34 ներկայացման. Թատրոնի և լուսաւորութեան 332 ր.։ Դերասանների և պորտֆիա 90 ր.։ Պարիկ-մահեր 164 ր. 50 կ.։ Երաժիշտների խմբին 202 ր.։ Մարկա, բարեգ. նպաստ. 181 ր. 14 կ.։ Աֆիշա տպելուն և ցրվելուն 205 ր.։ Տոմսակներ տպելուն 34 ր.։ Տոներերի զբէհ 103 ր. 30 կ.։ Րեկվիզիտ, դեկօրացիա և կասքեր *) 121 ր. 68 կ.։ Վարձատրութիւն, մասնակցողներից մի քանիսի 160 ր. 55 կ.։ Ընդամենը—1544 ր. 17 կ.։

*) Ծանօթ. Տեղի հեռաւորութեան պատճառով մասնակցող օրիորդներին և դերասաններին միշտ կառքի փող ենք վճարել։

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
վաճառվում են հայերէն հետեւեալ նոր գրքերը՝
ԱԴՈՆՑ Ն., Բանբեր գրականութեան և արուեստի, պատկերազարդ, մեծադիր 256 երես, ընտիր թղթի վրա, ա. գիրք, Պետերբուրգ, 1903 թ. գ. 2 ր. 50 կ. Բաժանորդագինն է 2 հատ. 4 ր.
ԱՐՄՐՈՒՆԻ Վ., բժշկ., Աչքեր (Առողջապահական և բարոյագիտական էտիւդ) պատկերներով, Թիֆլիս, 1903 թ. գ. 60 կ.
ԴՈՒՐԲԱՆԵԱՆ Ե., Ծանօթ պատկերներ (երէցփոխների, եկեղեցու ապաստարանների կեանքից), Պետերբուրգ, 1903 թ. գ. 75 կ.
ՍԱՐԳԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆ Ա., Երազ կամ Օսկան Պետրովիչն Եդեմում, Ֆէյերիա 1 գործողութեամբ, Թիֆլիս, 1903 թ. գ. 20 կ.
Նոյն տեղը վաճառվում են բոլոր ուսումնարանների համար դասագրքեր։
Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (ռ. կ. չ.) 5—5

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ԼԵՇՏՈՒԿՕՎ ՓՈՂՈՑ, 4.
Ընդունում է մատչելի գնով ամեն տեսակ տպագրական, վիմագրական, կազմարարական և գծագրական գործեր։
6—10

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ
Գեղարուեստական գործերի հրատարակիչներին հրաւիրում է ամենաձեռնտու պայմաններով առանալ, 1) Նկարչական գործեր և խորհուրդներ. 2) լուսանկարչական ժողովածու ըստ պահանջի. 3) լուսատիպ (фототипія) հաւանելի հրատարակութիւններ, բաց-նամակներ, ալբոմներ և այլն։ 4) Ցինկօգրաֆիական կլիշէների պատուէրներ. լուսատպարանը արդէն ունի մի շարք հրատարակութիւններ մեծադիր և բաց-նամակներով, որոնց ձեռք բերողներին զիջումն է լինում զումարի համեմատ։ Մանրամասնութիւնների համար դիմում են Художественная фототипія С. А. Согомонянца Тифлисъ.
2—3

ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ!!!
Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ
որ գտնվում է Գոլովինսկիյ Պրոսպէկտի վրա I գիմնազիայի հանդէպ
Ստացված է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ներկայ և եկող սեզոնների համար կանանց, տղամարդկանց և երեխայոց պատրաստի հագուստներ, կարված պարիզեան և բեռլինեան ամենավերջին տարազով։
Ունենք նաև քաղաքացիական բոլոր հաստատութիւնների և միջնակարգ դպրոցների հագուստներ։
Ընդունում ենք մեր սեփական կտորներից—տղամարդկանց հագուստների ամեն տեսակ պատուէրներ—որոնք ստացված են ռուսական և արտասահմանեան ամենալաւ գործարաններից։ Արժանութեան կողմից՝ չունի ոչ մի մրցող։
6—10

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Октября 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Ванковая ул.